ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Տաջիկստանի Հանրապետության բնապահպանության նախարարության միջև շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը և Տաջիկստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

հիմնվելով պետական ինքնիշխանության սկզբունքի վրա և գիտակցելով իրենց պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում,

ցանկանալով համագործակցության զարգացման միջոցով աջակցել շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործնական արդյունքների հասնելու անհրաժեշտ միջոցների կիրառմանը,

համոզված լինելով, որ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցությունը կնպաստի երկու հանրապետությունների ժողովուրդների միջև հարաբերությունների հետագա զարգացմանը,

ընդունելով, որ շրջակա միջավայրը հանդիսանում է մարդկության հիմնական ժառանգությունը և գիտատեխնիկական համագործակցությունը հիմք է հանդիսանում շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների բանական օգտագործման բնագավառում համատեղ գործունեության համար,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը, սույն Համաձայնագրին և իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան, պայմանավորվում են իրավահավասարության ու փոխշահավետության հիման վրա իրականացնել շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների օգտագործման բնագավառում համագործակցություն՝ հաշվի առնելով կայուն զարգացման նպատակներն ու սկզբունքները:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- փորձի փոխանակում էկոլոգիապես անվտանգ, սակավաթափոն/անթափոն և ռեսուրսներ խնայող տեխնոլոգիաների մշակման և ներդրման բնագավառում,
- փորձի և տեղեկատվության փոխանակում հողերի բանական օգտագործման, դրանց դեգրադացիայի և աղտոտման դեմ պայքարի, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ կենսաբանական մեթոդների ներդրման վերաբերյալ,
- տեղեկատվության փոխանակում արդյունաբերական, գյուղատնտեսական և կենցաղային թափոնների վնասազերծման և կրկնակի օգտագործման վերաբերյալ,
- տեղեկատվության փոխանակում քիմիական նյութերի կառավարման և անվտանգ օգտագործման ոլորտում,
- փորձի փոխանակում էկոլոգիական մոնիտորինգի կազմակերպման հարցում,
- փորձի և տեղեկատվության փոխանակում ազգային այգիների և արգելանոցների գիտական և գործնական կազմակերպման, ինչպես նաև ֆլորայի, ֆաունայի և բնական պաշարների պահպանության բնագավառներում,

- փորձի փոխանակում էկոլոգիական տվյալների հաշվառման արդյունավետ մեթոդների ուսումնասիրության և տվյալների բանկերի ստեղծման բնագավառում,

- փորձի փոխանակում վտանգավոր արտանետումներից և վնասակար ֆիզիկական ներգործություններից մթնոլորտի պահպանության պետական կառավարման կազմակերպման և իրականացման բնագավառում,

- տեղեկատվության փոխանակում կլիմայի փոփոխության և օզոնային շերտի քայքայման հետևանքների մեղմացման համար ձեռնարկվող միջոցների մասին,

- փորձի և տեղեկատվության փոխանակում ջրային պաշարների պահպանության և բանական օգտագործման բնագավառում,

- փորձի փոխանակում շրջակա միջավայրի աղտոտման և բնական պաշարների բանական օգտագործման հսկողության տնտեսական լծակների օգտագործման վերաբերյալ,

- փորձի փոխանակում բնապահպանական հիմնադրամների ձևավորման և դրանց կառավարման մեխանիզմների վերաբերյալ:

Պայմանավորվող կողմերի միջև փոխհամաձայնեցման կարգով համագործակցության հիմնական ուղղությունների ցանկը կարող է փոփոխվել կամ լրացվել:

Հոդված 3

Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությունն իրականացվում է Պայմանավորվող կողմերի միջև ձեռք բերված համաձայնագրերի հիման վրա՝ հետևյալ ձևերով.

- գիտնականների, մասնագետների, պատվիրակությունների փոխանակում գիտական և գործնական նպատակներով,

- փորձագետների և աշխատանքային խմբերի համաժողովների ու խորհրդակցությունների անցկացում,

- էկոլոգիական գիտատեխնիկական և նորմատիվ-իրավական տեղեկատվության փոխանակում:

Պայմանավորվող կողմերը կարող են լրացուցիչ փոխհամաձայնեցնել համագործակցության այլ ձևեր:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը, ելնելով սույն Համաձայնագրի նպատակներից, նպաստում են իրենց հանրապետությունների շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվող հիմնարկների, ընկերությունների և կազմակերպությունների միջև ուղղակի կապերի և անմիջական շփումների հաստատմանը և զարգացմանը:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի հիման վրա Պայմանավորվող կողմերի միջև համագործակցությունը համակարգում են Պայմանավորվող կողմերի լիազոր ներկայացուցիչները, որոնց հանդիպումները կանցկացվեն ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Տաջիկստանի Հանրապետությունում:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, կհամարվեն նրա անբաժանելի

մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ Պայմանավորվող կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցումը ստանալու օրվանից և գործում է 5 տարի ժամկետով:

Սույն Համաձայնագրի գործողությունը ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամանակահատվածով, եթե Պայմանավորվող կողմերից ոչ մեկը համապատասխան հնգամյա ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Պայմանավորվող կողմին չի ծանուցում Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 2003 թվականի նոյեմբերի 25-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, տաջիկերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

***Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2004 թվականի հուլիսի 8-ից:**